ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 16 » հոկտեմբերի 2019 թվականի N: 253 ք.Գյումրի

ՄՈՒՇԵՂ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ, ԱՐՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ, ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի, 29-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 2-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետի 2019 թվականի հոկտեմբերի 15-ի զեկուցագիրը.

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ Մուշեղ Մուրադյանին, գլխավոր մասնագետներ Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և առաջատար մասնագետի ժամանակավոր թափուր պաշտոնը ժամկետային աշխատանքային պայմանագրով ուսուցանվող աուդիտորի կարգավիճակով զբաղեցնող Միեր Հարությունյանին գործուղել.
   1) 2019 թվականի հոկտեմբերի 17-ին և 18-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Սարապատ համայնքի Փոքր Սարիար բնակավայր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Փոքր Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու,
   2) 2019 թվականի հոկտեմբերի 21-ին, 22-ին և 23-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Անիավան բնակավայր՝ Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի «Անի կայարանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու,

3) 2019 թվականի հոկտեմբերի 24-ին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մեծ Սարիար բնակավայր՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Սարիարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու:

2. Մուշեղ Մուրադյանին, Արտակ Հայրապետյանին, Սամվել Հարությունյանին և Միեր Հարությունյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝